



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆ**



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԶԱՅՆԵՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԲԱՇԽՎԵԼՈՒ
ԴԵՊՔՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՄ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԵՎ
ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆՎԱՐ 2022**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Ձեկույցի կազմման անհրաժեշտությունը ցույց տվող իրավական նախապատմությունը	6
Գլուխ 2. Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգավորման իրավաչափությունն անձի դատական պաշտպանության իրավունքի պատշաճ երաշխավորման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական հարթություններում	8
Գլուխ 3. Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի դիտարկումը միջազգային փորձի տեսանկյունից	22

Ներածություն

Սահմանադրական դատարանը կարող է մերժել քննության ընդունված դիմումը, երբ Սահմանադրական դատարանում ձայները հավասար են բաշխվում ու ՍԴ-ն որոշում կամ եզրակացություն այդ դեպքում չի կայացնում:

Խոսքը վերաբերում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասին, որը դատարանին հնարավորություն է տալիս մերժված համարելու արդեն քննության ընդունված այն դիմումը, որի քննարկման վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունվում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումը սույն գեկույցում ներկայացվում է՝ ելնելով հետևյալ հիմնական մոտեցումներից.

- Սահմանադրական դատարանին դիմում ներկայացնելն ու դատարանի կողմից որոշում կայացնելը մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իմաստով.

- Սահմանադրական դատարանը կոնկրետ գործերով իրականացնում է կոնկրետ անձանց իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման գործառույթ, քանի որ վիճարկվող նորմը կամ դրա մեկնաբանությունը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչող ՍԴ որոշման հիման վրա անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման: Մինչդեռ, Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործով դիմումը տեխնիկական նկատառումներով մերժվելու դեպքում, փաստորեն, մարդը զրկվում է իր խախտված իրավունքների վերականգնման այդ հնարավորությունից.

- Սահմանադրական դատարանը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց լինելուց բացի նաև իրականացնում է կանխարգելիչ գործառույթ: Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված ուղենիշային դիրքորոշումները կանխարգելիչ նշանակություն ունեն իրավունքների հետագա խախտումները բացառելու և Սահմանադրության ու մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Խնդրի հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Ըստ այդմ, Բարձր դատարանին ուղղված դիմումով վիճարկվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի¹ 62-րդ հոդվածի 9-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ և 81-րդ հոդվածներին:

¹ Այսուհետ՝ Օրենք

Սահմանադրական դատարան ներկայացված այդ դիմումի համար ազդակ է դարձել 2020 թվականի դեկտեմբերի 9-ին Սահմանադրական դատարան ներկայացված այն դիմումը, որով վիճարկվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Խոսքն այդ դիմումի քննարկման այնպիսի արդյունքի մասին է, որով դիմումը Սահմանադրական դատարանը մերժված է համարել քննարկվող հարցը ձայների հավասարության պատճառով: Բարձր դատարանը Մարդու իրավունքների պաշտպանի այդ դիմումի կապակցությամբ այդպես էլ ըստ էության որևէ որոշում չի կայացրել:

Այս առնչությամբ պետք է հատուկ ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրումը նպատակ ունի ներկայացնելու անհատական դիմում բողոքների արդյունքներով արձանագրված համակարգային խնդիրները, ինչպես նաև նպաստելու դրանց լուծմանը և հետագայում նմանատիպ խնդիրների և խախտումների բացառմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի պարտադիր կատարման ենթակա որոշումներով, փաստորեն, արձանագրվում են Պաշտպանի դիմումներով բարձրացված համակարգային խնդիրները, վիճարկվող նորմերը ճանաչվում են Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ առնվազն տրվում են վիճարկվող նորմերի պաշտոնական մեկնաբանություններ:

Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը կիրառելու արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումում նշված համակարգային խնդիրները մնում են չլուծված, իրավունքների խախտումները՝ չվերացած՝ դրանով իսկ առկախված թողնելով վիճարկվող նորմի իրավաչափության հարցն, առհասարակ:

Ստացվում է՝ Սահմանադրական դատարանը կարող է հրաժարվել իրավունքների պաշտպանությունից՝ մարդուն թողնելով իր խնդիրների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի դեպքում դա էլ իր հերթին անխուսափելի բացասական ազդեցություն է ունենում Պաշտպանի աջակցությունը ստանալու յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի, Պաշտպանի սահմանադրական գործառույթների վրա, խաթարում է հանրային վստահությունը սահմանադրական այս հաստատության նկատմամբ:

Սահմանադրական դատարանում քննվող գործի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու կարևորությունն ու անհրաժեշտությունն ընդգծվում է հատկապես այն բանի հաշվառմամբ, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:

Սույն զեկույցում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պրակտիկայի հաշվառմամբ հստակ ցույց է տրված, որ Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգավորումը հանգեցնում է դատական պաշտպանության յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում առկա չէ:

Գլուխ 1. Զեկույցի կազմման անհրաժեշտությունը ցույց տվող իրավական նախապատմությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի դեկտեմբերի 9-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴԱՈ-2 աշխատակարգային որոշմամբ Պաշտպանի դիմումն ընդունվել է քննության:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 16-ի թիվ ՍԴԱՈ-34, ապրիլի 8-ի թիվ ՍԴԱՈ-73 և հուլիսի 2-ի թիվ ՍԴԱՈ-137 որոշումներով գործի դատաքննությունն սկսելու ժամկետը հետաձգվել է, իսկ Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴԱՈ-190 որոշմամբ տվյալ գործով դռնփակ խորհրդակցությունը 2021 թվականի սեպտեմբերի 7-ին ընդմիջվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 8-ը՝ ժամը 15.00-ն՝ ըստ էության նոր որոշման նախագիծը մշակելու համար:

Սահմանադրական դատարանի «concourt.am» պաշտոնական կայքէջի «Նորություններ» բաժնում 2021 թվականի սեպտեմբերի 8-ին կատարված հրապարակման ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-8-ի նիստերում քննության է առել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Ըստ նույն հրապարակման՝ հաշվի առնելով, որ նշված գործի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չի ընդունվել՝ նշված դիմումը համարվում է մերժված՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի: Ընդ որում, այս մասին հայտարարվել է նիստերի դահլիճում²:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարանում վիճարկվող այդ դիմումի քննարկման նման արդյունքն էլ հիմք է հանդիսացել սույն զեկույցով Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգավորման սահմանադրականության հարցին անդրադառնալու համար: Ավելին, դրույթի իրավական բովանդակության ու կոնկրետ գործով դրա կիրառության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ խնդրո առարկա դրույթը կարող է կիրառվել նաև անձանց անհատական դիմումների քննարկման դեպքերում, այսինքն՝ սուբյեկտիվ իրավունքների խախտումների հարցերը քննարկելիս:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դիմելու իրավունքի նախապայմանները՝ դրույթի կիրառելիության ու դատական ատյանները սպառած լինելու

² Հասանելի է <https://www.concourt.am/armenian/news/index.htm> հղումով:

առումով՝ հենց նույն դիմող սուբյեկտների կողմից «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի՝ սույն զեկույցով քննարկվող կարգավորումը վիճարկման առարկա դառնալ չէր կարող: Հետևաբար, Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտ, անհրաժեշտ է համարում իր իրավասության գործադրումը՝ Բարձր դատարանի առջև բարձրացնելու իր իսկ սահմանադրական առաքելությանը չհամապատասխանող դրույթի իրավաչափության հարցը:

Այսպիսով, բարձրացված հարցի դիտարկման արդյունքները վեր են հանել խնդիրը սահմանադրականության հարթությունում դիտարկելու անհրաժեշտությունը:

**Գլուխ 2. Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգավորման
իրավաչափությունն անձի դատական պաշտպանության իրավունքի պատշաճ
երաշխավորման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական և
միջազգային իրավական հարթություններում**

Ձեկույցում քննարկվող նորմի իրավաչափության հարցը դիտարկվել է անձի դատական պաշտպանության սահմանադրական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի՝ կոնվենցիոն իրավունքների պատշաճ ապահովման տեսանկյունից: Այսպես՝

Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Այսինքն, Սահմանադրական դատարանը ևս ՀՀ դատական համակարգի մասն է կազմում՝ իրականացնելով սահմանադրական արդարադատություն:

Սահմանադրական վերահսկողության համակարգի գլխավոր առաքելությունն է ապահովել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, երաշխավորել իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի պահպանումը և մարդու ու քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անմիջական գործողությունը: Դատական սահմանադրական վերահսկողության կարգով նման գործառույթի իրականացումն էլ կազմում է սահմանադրական արդարադատության բովանդակությունը: Սահմանադրական արդարադատության էությունը հանգում է նրան, որ արդարադատության առարկա են դառնում նորմատիվ իրավական ակտերն ու պետական իշխանության մարմինների գործողությունները, գնահատվում է դրանց համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին և ապահովվում է այդ ակտերի ու գործողությունների սահմանադրականությունը³:

Սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական նորմերի այն համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողությամբ պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները և սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում: Այլ կերպ՝ սահմանադրական արդարադատությունն իրականացվում է դատական սահմանադրական վերահսկողության միջոցով՝ հիմք ունենալով սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարության իրավանորմերի համակարգը:

³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: «Իրավունք», 2010թ., էջ 914: Հասանելի է <https://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> հղումով:

Սահմանադրական արդարադատության առջև դրվում է 3 հիմնական նպատակ՝

ա) իրավական ակտերի սահմանադրականության ապահովում և դրա միջոցով իշխանության տարանջատված թևերի սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռության ապահովում,

բ) լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջև առաջացած վեճերի լուծում,

գ) յուրաքանչյուր անձի սահմանադրական իրավունքների ապահովման ու պաշտպանության համակարգի գործունակության երաշխավորում՝ մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման միջոցով:

Այս նպատակների իրականացման համար սահմանադրական դատարաններն, ի թիվս այլ լիազորությունների, օժտված են նաև օրենքների ու նորմատիվ այլ ակտերի սահմանադրականության հարցի որոշման լիազորությամբ⁴:

Սահմանադրական վերահսկողությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որն ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջորդայնությունն ու համընթաց բնույթը: Սահմանադրական վերահսկողությունը միաժամանակ խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կատարելագործելու և հարավոփոխ հասարակական հարաբերությունների բնույթին ներդաշնակելու համար: Այն ձևավորում է նաև պետական մտածողության ճաշակ ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն, ունի լուրջ կանխարգելիչ դեր, երբ հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մղում է իրավական, սահմանադրական գործելակերպի⁵:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2013 թվականի հունիսի 17-ի թիվ CDL-AD(2013)012 կարծիքում հայտնել է դիրքորոշում, ըստ որի՝ Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական ժողովրդավարությունում զսպումների և հակակշիռների մեխանիզմի առանցքային բաղադրիչն է⁶:

Սույն զեկույցում սահմանադրական արդարադատությունը դիտարկվել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների կոնվենցիոն իրավունքի ապահովման համատեքստում: Այսպես.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք, ում

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: «Իրավունք», 2010թ., էջ 916: Հասանելի է <https://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> հղումով:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2013\)012-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2013)012-e) հղումով, էջ 18, կետ 76:

նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է իրավական պաշտպանության հասանելիություն ազգային մակարդակով՝ կիրառելու կոնվենցիան այն դեպքում, երբ դա կարող է անհրաժեշտ լինել ներպետական ազգային իրավունքի շրջանակներում պաշտպանված լինելու համար: Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցը պետք է նույնքան արդյունավետ լինի ինչպես գործնականում, այնպես էլ օրենքի տեսանկյունից, մասնավորապես՝ այն իմաստով, որ պետության գործողություններն ու բացթողումները չպետք է անարդարացիորեն խոչընդոտեն դրա կիրառմանը⁷:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածով ամրագրված իրավունքի համատեքստում քննարկման առարկա դարձնելով Սահմանադրական դատարանի դերը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է հստակ դիրքորոշում, ըստ որի՝ **սահմանադրական դիմում սկզբունքորեն պետք է դիտարկվի որպես իրավունքների պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով⁸: Վարույթը Սահմանադրական դատարանում սկզբունքորեն դուրս չի գալիս Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներից⁹: Ավելին, սահմանադրական վեճերը կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում, եթե դրանց արդյունքը որոշիչ նշանակություն ունի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար¹⁰:**

Սահմանադրական դատարանի կողմից գանգատների քննությունը որպես իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց չի կարող ծառայել միայն, երբ Սահմանադրական

⁷ Տե՛ս Հուսեյն Աբու Ջաբայդահ ընդդեմ Լեհաստանի (Husayn (Abu Zubaydah) v. Poland) գործով 2014 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 7511/13, կետ 540: Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93, կետ 124:

⁸ Տե՛ս Վինչիքը և Ուրիշներն ընդդեմ Սերբիայի (Vinčić and Others v. Serbia) գործով 2010 թվականի մարտի 2-ի վճիռը, գանգատներ թիվ 44698/06, 44700/06, 44722/06, 44725/06, 49388/06, 50034/06, 694/07, 757/07, 758/07, 3326/07, 3330/07, 5062/07, 8130/07, 9143/07, 9262/07, 9986/07, 11197/07, 11711/07, 13995/07, 14022/07, 20378/07, 20379/07, 20380/07, 20515/07, 23971/07, 50608/07, 50617/07, 4022/08, 4021/08, 29758/07 և 45249/07, կետ 51: Տե՛ս Միրաժովիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի (Mirazović v. Bosnia and Herzegovina) գործով 2006 թվականի մայիսի 16-ի որոշումը, գանգատ թիվ 13628/03: Նասկովիչն ընդդեմ Սերբիայի (Nasković v. Serbia) գործով 2011 թվականի հունիսի 14-ի որոշումը, գանգատ թիվ 15914/11:

⁹ Տե՛ս Գաստը և Փոփն ընդդեմ Գերմանիայի (Gast and Popp v. Germany) գործով 2000 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 29357/95, կետ 64: Սյուզմանն ընդդեմ Գերմանիայի (Süssmann v. Germany) գործով 1996 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 20024/92, կետ 39:

¹⁰ Տե՛ս Կրասկան ընդդեմ Շվեյցարիայի (Kraska v. Switzerland) գործով 1993 թվականի ապրիլի 13-ի վճիռը, գանգատ թիվ 1942/88, կետ 26: Սյուզմանն ընդդեմ Գերմանիայի (Süssmann v. Germany) գործով 1996 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 20024/92, կետ 41: Ռինգայսենն ընդդեմ Ավստրիայի (Ringseisen v. Austria) գործով 1971 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 2614/65, կետ 94:

դատարանում վիճարկվող իրավական դրույթի ենթադրյալ խախտումը ոչ թե նրա հակասահմանադրական լինելու հետևանք է, այլ սահմանադրական բովանդակություն ունեցող դրույթի սխալ կիրառման կամ մեկնաբանման արդյունք¹¹:

Եվրոպական դատարանը սահմանադրական բողոքի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց լինելու հետևյալ իրավական չափանիշներն է առաջ քաշել: Այսպես, Սահմանադրական դատարանին ներկայացված բողոքը կարող է ճանաչվել արդյունավետ միջոց, երբ՝

1) անհատական որոշումը, որը ենթադրաբար խախտել է Կոնվենցիան, ընդունվել է ներպետական օրենսդրության հակասահմանադրական դրույթի ուղղակի կիրառմամբ, և

2) այդ տեսակի որոշումների վերանայման համար կիրառվող ընթացակարգային նորմերն ապահովում են գործի վերաբացման կամ վերջնական վճռի չեղյալ ճանաչելու հնարավորություն Սահմանադրական դատարանի այն որոշման հիման վրա, որով վիճարկվող դրույթը հակասահմանադրական է ճանաչվել¹²:

Սահմանադրական դատարանում վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ որոշումների հետևանքների վերաբերյալ կարգավորումներ են բովանդակում Օրենքի 68-րդ և 69-րդ հոդվածները: Մասնավորապես, Օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավական ուժը կորցնում է Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ նույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված դեպքերի: Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

Օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերով (անհատական դիմումներով)՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված **վերջնական դատական**

¹¹ Տե՛ս Սավիչսն ընդդեմ Լատվիայի (Savičs v. Latvia) գործով 2013 թվականի փետրվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 17892/03, կետ 113: Դորոտա Շոտ-Մեդիհնսկան ընդդեմ Լեհաստանի (Dorota Szott-Medyńska and Others v. Poland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը, գանգատ թիվ 47414/99:

¹² Տե՛ս Դորոտա Շոտ-Մեդիհնսկան ընդդեմ Լեհաստանի (Dorota Szott-Medyńska and Others v. Poland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը, գանգատ թիվ 47414/99:

ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

Ասվածից զատ, Սահմանադրական դատարանի իրավաբանությամբ է հենց զարգացել Դատարանի որոշումների իրավական նշանակության ու դրանք ամբողջության մեջ դիտարկելու ու կիրառելու սկզբունքային մոտեցումը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)¹³՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես Սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը¹³:

Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1359 որոշումը միաժամանակ հանրային իշխանության մարմիններին և պաշտոնատար անձանց ուղղված պահանջ է բովանդակում՝ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորելու դրանց ամբողջության մեջ՝ հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:

Փաստորեն, ՀՀ օրենսդրական համակարգն ապահովում է Սահմանադրական դատարանի՝ վիճարկվող նորմը կամ դրա մեկնաբանությունը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչող որոշման հիման վրա անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի նոր հանգամանքի հիմքով վերանայման հնարավորություն:

Այսպիսով, վկայակոչված նորմերի և Եվրոպական դատարանի դիրքորոշումների համալիր դիտարկման արդյունքում վստահաբար կարող ենք պնդել, որ ՀՀ Սահմանադրական դատարանին դիմումներ ներկայացնելն անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է Կոնվենցիայի իմաստով:

¹³ Տե՛ս, օրինակ՝ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ՍԴՈ-943, 2017 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴՈ-1359 որոշումները:

Համոզվելով, որ Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելն իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է՝ խնդրին արդեն կարող ենք անդրադառնալ **դատարանի մատչելիության** ապահովման տեսանկյունից: Այսպես.

Դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորման համատեքստում ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշմամբ կարևորել է իրավակարգավորման որոշ սկզբունքներ (չափանիշներ), որոնք հանգում են հետևյալին.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 որոշմամբ արձանագրել է, որ իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Դատարանի մատչելիության հիմնախնդրին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ թեև դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ¹⁴:

¹⁴Տե՛ս Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության (Al-Adsani v. United Kingdom) գործով 2001 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 35763/97, կետ 53: Խալիֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France) գործով 2000 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, կետ 35-36: Ուեյթը և Քեննեդին ընդդեմ Գերմանիայի (Waite and Kennedy v. Germany) գործով 1999 թվականի փետրվարի 18-ի վճիռը,

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի գործնական և արդյունավետ¹⁵: Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է հստակ և գործնական հնարավորություն ունենա վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվել իր իրավունքներին¹⁶:

Դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է, երբ նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և այդպիսով խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննության¹⁷: Պետք է համոզվել, որ կիրառվող սահմանափակումները չեն սահմանափակում կամ նվազեցնում դատարանի մատչելիությունն այն աստիճան, որ խախտվի իրավունքի բուն էությունը¹⁸:

Ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանում քննվող հարցի լուծման առնչությամբ ուշագրավ են նաև գործը քննության ընդունելու վերաբերյալ հետևյալ օրենսդրական կարգավորումները: Այսպես, Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ընդունվում է վարույթ Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով: ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 9-ի «Սահմանադրական դատարանի աշխատակարգի մասին» թիվ ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշման 31-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի նախագահը գործը քննության ընդունելու հարցի վերաբերյալ հաղորդումը ստանալուց հետո գործը քննության ընդունելու հարցը լուծելու նպատակով ողջամիտ ժամկետում հրավիրում է *Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ*:

գանգատ թիվ 26083/94, կետ 59: **Մարինին ընդդեմ Ալբանիայի (Marini v. Albania) գործով 2007 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 3738/02, կետ 113 և այլն:**

¹⁵ Տե՛ս Բելլեթոն ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38:

¹⁶ Տե՛ս Քանյետե դե Գոնին ընդդեմ Իսպանիայի (Cañete de Goñi v. Spain) գործով 2003 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55782/00, կետ 34: Բելլեթոն ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38: Բենեֆիցիո Կապպելլա Պաոլինին ընդդեմ Սան Մարինոյի (Beneficio Cappella Paolini v. San Marino) գործով 2004 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 40786/98, կետ 28: Նունե Դիասն ընդդեմ Պորտուգալիայի (Nune Dias v. Portugal) գործով Եվրոպական դատարանի որոշումը, հասանելի է <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-23730> հղումով և այլն:

¹⁷ Տե՛ս Դումիտրու Գեորգեսն ընդդեմ Ռումինիայի (Dumitru Gheorge v. Romania) գործով 2016 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 33883/06, կետ 28: Էֆստատիուն և Ուրիշներն ընդդեմ Հունաստանի (Efsthathiou and Others v. Greece) գործով 2006 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, կետ 24:

¹⁸ Տե՛ս Սիակովսկան ընդդեմ Լեհաստանի (Siatkowska v. Poland) գործով 2007 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, կետ 102:

Նույն որոշման 112-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցով *դատական կազմում միաձայնության բացակայության դեպքում դատական կազմի նախագահողը քվեարկության արդյունքները ներկայացնում է Սահմանադրական դատարանի նախագահին*, որը քվեարկության արդյունքները ներկայացնելու օրվանից հետո՝ ողջամիտ ժամկետում, հրավիրում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցը վերստին քննարկելու և լուծելու համար: Իսկ որոշման 125-րդ կետը սահմանում է, որ աշխատակարգային որոշումների քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում **աշխատակարգային որոշումը համարվում է չընդունված**:

Մինչդեռ, սկզբունքորեն հակառակ մոտեցումն է ցուցաբերվել, օրինակ, Ուկրաինայի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով, որի 66-րդ և 67-րդ հոդվածների համաձայն՝ Սահմանադրական դատարանի Մեծ պալատում և Սենատում սահմանադրական վարույթ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցը քննարկելիս ձայների հավասարության դեպքում սահմանադրական վարույթը համարվում է հարուցված¹⁹:

Գործի քննության և լուծման համար անհրաժեշտ ձայների հավասարության դեպքում քննվող հարցի լուծման առնչությամբ օրենսդիրն առավել առաջադիմական և մարդասիրական մոտեցում է ցուցաբերել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորների կոլեգիալ կազմով գործը քննելիս նախագահողը գործի քննության և լուծման հետ կապված բոլոր հարցերը ներկայացնում է բոլոր դատավորների լուծմանը: Ընդունված է համարվում դատավորների մեծամասնության պաշտպանած որոշումը, իսկ **եթե ձայները կիսվել են, ապա այն որոշումը, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար**:

Անդրադառնալով սույն զեկույցով քննարկվող կարգավորմանը՝ հարկ է հստակ արձանագրել, որ Սահմանադրական դատարանին դիմելով, Սահմանադրության 169-րդ հոդվածով սահմանված սուբյեկտներն ակնկալում են իրենց ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնում սահմանադրական արդարադատության իրականացման միջոցով: Սահմանադրական դատարան ներկայացված իրենց դիմումի քննության ընդունումն էլ ավելի է ամրապնդում այդ ակնկալիքը, քանի որ ենթադրելի է, որ Սահմանադրական դատարանն իրենց դիմումի քննության արդյունքում կայացնելու է գործն ըստ էության լուծող, որոշակի բովանդակություն ունեցող որոշում, որով վիճարկվող նորմը կա՛մ ճանաչվելու է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կա՛մ առնվազն ՍԴ պատճառաբանված որոշմամբ հիմնավորվելու է նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը:

¹⁹ Հասանելի է <http://www.bbcj.eu/law-ukraine-constitutional-court-ukraine/> հղումով:

Նման եզրահանգման հիմք է Օրենքի 61-րդ 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության 168-րդ հոդվածով նախատեսված հարցերով²⁰, բացառությամբ 7-րդ կետով նախատեսված հարցի, **ընդունում է որոշումներ**, իսկ 168-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հարցով՝ եզրակացություն: **Այսինքն, Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործի քննության արդյունքում որևէ բովանդակային որոշում կայացնելու հրամայականը բխում է հենց Սահմանադրությունից:**

Միանշանակ է այն, որ Սահմանադրական դատարանը կոնկրետ գործերով իրականացնում է կոնկրետ անձանց իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման գործառույթ: Այս համոզմունքը բխում է վիճարկվող նորմը կամ դրա մեկնաբանությունը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչող ՍԴ որոշման հիման վրա անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայման ենթակա լինելու՝ օրենսդրորեն ամրագրված հնարավորությունից: Այսինքն, Բարձր դատարանում վիճարկվող նորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչող որոշումը որպես նոր հանգամանք հիմք է այն դատական ակտի վերանայման համար, որով խախտվել են անձի իրավունքները:

Մինչդեռ, Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործով դիմումը տեխնիկապես մերժվելու դեպքում, փաստորեն, անձը զրկվում է իր խախտված իրավունքների վերականգնման այդ հնարավորությունից: Այդպիսով, փաստորեն, ոտնահարվում են Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներով ամրագրված արդար դատաքննության, վերջինիս բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության և իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքները:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ այստեղ խոսքը Սահմանադրական դատարանի որոշման միայն եզրափակիչ մասին չի վերաբերում, որով պատասխան է տրվում վիճարկվող ակտի՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու կամ հակասահմանադրական լինելու խնդրին: Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները ևս իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:

²⁰ Չխորանալով Սահմանադրական դատարանի այլ լիազորությունների մեջ՝ հարկ է առանձնացնել միայն Սահմանադրության 168-րդ հոդվածի հենց 1-ին կետով ամրագրված լիազորությունը, ըստ որի՝ Սահմանադրական դատարանն Օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Մինչդեռ, սույն զեկույցի հիմք հանդիսացած դեպքով Սահմանադրական դատարանի կողմից որևէ որոշում չի կայացվել, այդպիսով ոչ միայն վերջնական լուծում չի տրվել այն հարցին, թե արդյոք Բարձր դատարանում վիճարկվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերը և 422-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը, թե ոչ, այլև վիճարկվող դրույթների վերաբերյալ որևէ պաշտոնական մեկնաբանություն ևս չի տրվել:

Սահմանադրական դատարանը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց լինելուց բացի նաև իրականացնում է կանխարգելիչ գործառույթ, քանի որ Բարձր դատարանն իր սահմանադրական առաքելությունն իրացնելիս իրավակիրառման և օրենսդրության մեկնաբանման ուղենիշներ է սահմանում՝ նախանշելով այն սահմաններն ու շրջանակները, որոնք պետք է պահպանվեն իշխանության մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքում իրավական ակտեր (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և այլն) ընդունելիս: Այլ կերպ ասած՝ Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված ուղենիշային դիրքորոշումները կանխարգելիչ նշանակություն ունեն իրավունքների հետագա խախտումների հնարավոր դեպքերը բացառելու և Սահմանադրության ու մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի իրականացրած կանխարգելիչ գործառույթն ընդհանուր իրավական համակարգի զարգացմանն ու կատարելագործմանն է նպաստում:

Մինչդեռ, Օրենքի խնդրո առարկա 62-րդ հոդվածի 9-րդ մասը կարծես իրավական ճանապարհ է բացում Սահմանադրական դատարանի այդ առաքելությունը պատշաճ չիրացնելու համար:

Եթե Սահմանադրական դատարանում քննվող դիմումը մերժված է համարվել քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով, ապա դա նշանակում է, որ գործը բուն բովանդակային քննարկման առարկա է դարձել, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները Դատարանում քննարկվող այդ հարցի վերաբերյալ արդեն իսկ ձևավորել են իրենց հստակ դիրքորոշումներն առանձին վերցրած, որոնք համակցության մեջ պետք է ձևավորեին Սահմանադրական դատարանի վերջնական դիրքորոշումը: Մինչդեռ, Բարձր դատարանում քննարկվող և դատավորների կողմից ըստ էության քննության ենթարկված գործն այդպես էլ հանրության սեփականությունը չի դարձել, քանի որ վիճարկվող կարգավորման գործադրման արդյունքում չի առարկայացել Սահմանադրական դատարանի որոշման տեսքով:

Անձանց իրավունքների պաշտպանության գործառույթ իրականացնելու՝ Սահմանադրական դատարանի դերն ամրագրված է նաև Եվրոպական դատարանի իրավաբանությամբ, ըստ որի՝ Սահմանադրական դատարանի խնդիրն է ապահովել

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: *Դա այն պետություններում, որոնք նախատեսել են անհատական դիմումով Սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն, ազգային մակարդակով լրացուցիչ իրավական պաշտպանություն է տալիս քաղաքացիներին Սահմանադրությամբ երաշխավորված նրանց հիմնարար իրավունքների առնչությամբ*²¹:

Մինչդեռ, Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով դիմումը մերժված համարելու առկա կարգավորումը կարող է առաջ բերել հանրային այնպիսի ընկալում, որ Սահմանադրական դատարանը «խուսափել» է իր իրավասությանը վերաբերող՝ Դատարանում քննության ընդունված հարցի կապակցությամբ դիրքորոշում արտահայտելուց: Այս պայմաններում, կասկածի տակ է դրվում առհասարակ օրենսդրական նման կարգավորման իրավաչափ նպատակի իրատեսականությունը:

Ուստի, սկզբունքային է հասկանալ, թե Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված օրենսդրական լուծումը որքանով է համապատասխանում Օրենքի հետապնդած նպատակին:

Այս նպատակով օրենսդրական քննարկվող կարգավորման հետապնդած նպատակը բացահայտելու համար ուսումնասիրվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի ընդունման հիմնավորումները²², որոնցում, սակայն, որևէ անդրադարձ չկա սույն զեկույցով քննարկման առկա դարձած կարգավորմանը: Այլ կերպ ասած՝ բացահայտված չէ Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով հետապնդվող նպատակը, պարզ չէ, թե Սահմանադրական դատարանում քննվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չընդունելու դեպքում դիմումը մերժված համարելն ինչ նպատակի է ծառայում և արդյոք այդ նպատակն ունի իրավաչափ որևէ հիմք:

Փաստորեն, Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգավորումը չունի որևէ հիմնավորում, ինչն էլ ավելի է խորացնում մտահոգությունն առ այն, որ վիճարկվող դրույթը իրավական ուղի է բացում Սահմանադրական դատարանի արդարադատությունն անմատչելի դարձնելու համար:

Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ ՍԴՈ-1477 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ **անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության** կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում: Մինչդեռ, փաստորեն, Օրենքի

²¹ Տե՛ս Սյուզմանն ընդդեմ Գերմանիայի (Süssmann v. Germany) գործով 1996 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 20024/92, կետ 37:

²² Հասանելի է http://www.parliament.am/draft_docs6/K-206-K-206-9_himnavorum.pdf հղումով:

վիճարկվող դրույթը զրկում է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտներին իրենց իրավունքների ու ազատությունների՝ Սահմանադրական դատարանի կողմից անվերապահ պաշտպանության հնարավորությունից:

Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով դիմումը մերժված համարելու պայմաններում, փաստորեն, անձը չի հասնում իր իրավունքների և ազատությունների վերաբերյալ գործն ըստ էության լուծող, վերջնական և պարտադիր դատական ակտի կայացմանը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ՝ վերջնական պարտադիր դատական ակտերի կատարման պահանջը ներառվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի շրջանակներում²³:

Ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը պետք է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դիտվի որպես դատական քննության անբաժանելի մաս²⁴: Պետությունը պարտավոր է իր իրավական համակարգի աշխատանքը կազմակերպել այնպես, որպեսզի դատականորոշումների կատարման համար պատասխանատու պետական իշխանության տարբեր մարմինների միջև ապահովվի փոխհամագործակցություն և երաշխավորվի ողջամիտ ժամկետում դատական որոշումների կատարումը²⁵: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անիրական կլիներ, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումներն անկատար մնային: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողներ դատական ակտերի կատարումը, ապա դա, հավանաբար, կհանգեցներ այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս²⁶:

Փաստորեն, եթե դատական ակտի կատարումը համարվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության և դրա բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի անբաժանելի մաս, ապա արդեն վարույթ ընդունված գործի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող որոշում կայացնելը ևս անվերապահորեն պետք է դիտարկել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի

²³ Տե՛ս Օզունիսը և ուրիշներն ընդդեմ Հունաստանի (Ouzounis and others v. Greece) գործով 2002 թվականի ապրիլի 18-ի վճիռը, գանգատ թիվ 49144/99, կետ 21:

²⁴ Տե՛ս Դի Պյեդեն ընդդեմ Իտալիայի (Di Pede v. Italy) գործով 1996 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 15797/89, կետ 20:

²⁵ Տե՛ս Գլուշակովան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Glushakova v. Russian Federation) վճիռը, 2007 թվականի օգոստոսի 10, գանգատ թիվ 23287/05, կետ 17:

²⁶ Տե՛ս Հորնսբին ընդդեմ Հունաստանի (Hornsby v. Greece) գործով 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, գանգատ թիվ 18357/91, կետ 40:

շրջանակներում: Առնվազն անտրամաբանական կլիներ դատարանում քննվող գործով գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ չկայացնելն իրավաչափ համարելը, քանի որ այդպիսով անձի ենթադրյալ խախտված իրավունքների «ճակատագիրն» առկախված է մնում:

Սույն զեկույցում քննարկման առարկա դարձած կարգավորումը մտահոգության տեղիք է տալիս նաև այն հարցի հաշվառմամբ, թե ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի նման կերպով մերժումը ինչպես կարող է անդրադառնալ ՄԻՊ սահմանադրական ինստիտուտի հեղինակության և հանրային ընկալման վրա:

Հարկ է հատուկ ընդգծել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևորագույն ուղղություններից է Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելը: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրումը նպատակ ունի ներկայացնելու անհատական դիմում բողոքների արդյունքներով արձանագրված համակարգային խնդիրները, ինչպես նաև նպաստելու դրանց լուծմանը և հետագայում նմանատիպ խնդիրների և խախտումների բացառմանը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի պարտադիր կատարման ենթակա որոշումներով, փաստորեն, արձանագրվում են Պաշտպանի դիմումներով բարձրացված համակարգային խնդիրները, վիճարկվող նորմերը ճանաչվում են Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ առնվազն տրվում են վիճարկվող նորմերի պաշտոնական մեկնաբանություններ և այդ նորմերը պրակտիկայում գործադրելու ուղենիշային սահմաններ:

Մինչդեռ, Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված կառուցակարգի գործադրման արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առարկա դարձած համակարգային խնդիրները մնում են չլուծված՝ դրանով իսկ առկախված թողնելով վիճարկվող նորմի իրավաչափության հարցն առհասարակ: Նշվածն էլ իր հերթին անխուսափելիորեն ներազդում է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության նկատմամբ հանրային ընկալման, հեղինակության և գործունեությանը տրված գնահատականի վրա:

Վերոգրյալից բացի, Օրենքը չի կարգավորում այն հարցերը, թե Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը մերժելուց հետո դիմողը կարող է արդյոք նույն դիմումը կրկին ներկայացնել Սահմանադրական դատարան, այդ դեպքում ինչպես է լուծվելու այդ նույն դիմումը քննության ընդունելու հարցը, արդյոք այն ենթակա է լինելու մերժման հենց միայն այն փաստի հաշվառմամբ, որ նախկինում արդեն ներկայացված է եղել և այլն: Առաջ անցնելով պետք է նշել, որ գործի քննությունը մերժելու նման հիմք Օրենքի 29-րդ կամ 69-րդ հոդվածներով ամրագրված չէ:

Բացի այդ, բացահայտված չէ, թե ինչու է օրենսդիրը որպես Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանով ըստ էության որոշում կամ եզրակացություն չկայացնելու հետևանք ընտրել հենց դիմումը մերժված համարելը, ինչու նման դեպքերի համար որպես լուծում չի ընտրվել, օրինակ, Սահմանադրական դատարանի նախագահի ձայնի վճռորոշ լինելը, վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող ճանաչված համարելը և այլն: Սրանք լուծումներ են, որոնք ընդունված են միջազգային իրավաբանությամբ²⁷:

Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված կարգավորման գործադրման արդյունքում Սահմանադրական դատարան դիմած անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ դիտարկումներին անդրադառնալով՝ հարկ է հստակ արձանագրել, որ օրենսդրական կարգավորումները չպետք է ուղեկցվեն անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակմամբ կամ ոտնահարմամբ: Անհրաժեշտ է գտնել Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների և արդարադատության շահերը ողջամտորեն հավասարակշռող լուծում:

Այսպիսով, իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների առանձնահատկությունների և դրանց բովանդակության համալիր, միջազգային իրավական ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված նորմի գործադրման արդյունքում ոտնահարվում են յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքները:

²⁷ Այդ մասին առավել մանրամասն ներկայացված է սույն զեկույցի հետագա շարադրանքում:

Գլուխ 3. Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի դիտարկումը միջազգային փորձի տեսանկյունից

Տարբեր երկրներում առկա համապատասխան կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարաններում քննվող գործերի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքերի համար իրավական տարբեր կառուցակարգեր են գործում:

Այսպես, որոշ երկրներում Սահմանադրական դատարանների նախագահների ձայնն ունի վճռորոշ նշանակություն: Մասնավորապես, *Պորտուգալիայի* «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր դատավոր ունի մեկ ձայնի իրավունք, իսկ Սահմանադրական դատարանի նախագահի կամ նրան փոխարինելու դեպքում՝ փոխնախագահի ձայնը վճռորոշ է²⁸:

Հունգարիայի «Սահմանադրական դատարանի մասին» ակտի 48-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորները պարտավոր են մասնակցել որոշումների ընդունմանը, իսկ ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանի նախագահի ձայնը վճռորոշ է²⁹:

Գերմանիայի «Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» ակտի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Դաշնային Սահմանադրական դատարանի դատավորների ձայների հավասարության դեպքում նախագահող դատավորի ձայնը վճռորոշ է³⁰:

Ինդրին յուրովի մոտեցում է ցուցաբերել *Բելառուսի* օրենսդիրը: Մասնավորապես, «Սահմանադրական ընթացակարգերի վերաբերյալ» Բելառուսի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 9-րդ պարբերության համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս Սահմանադրական դատարանի դատավորների ձայների հավասարության դեպքում դրանք համարվում են վիճարկվող ակտի սահմանադրականության օգտին տրված³¹:

Նույնն է մոտեցումը նաև *Լատվիայի* «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով, որի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կայացնելիս ձայների հավասարության դեպքում Դատարանը որոշում է կայացնում, որ

²⁸ Հասանելի է <https://www.tribunalconstitucional.pt/tc/en/tclaw.html> հղումով:

²⁹ Հասանելի է <https://hunconcourt.hu/act-on-the-cc> հղումով:

³⁰ Հասանելի է

https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=13 հղումով:

³¹ Հասանելի է <http://www.kc.gov.by/en/document-5273> հղումով:

վիճարկվող նորմը (ակտը) համապատասխանում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմին³²:

Չեխիայի «Սահմանադրական դատարանի մասին» ակտի 12-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝ վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը լուծելիս Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր դատավոր իրավասու է մինչև հարցը քննարկման դնելը դրա լուծման վերաբերյալ առաջարկ ներկայացնել: Դատարանի յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել առաջարկներից միայն մեկի օգտին: Եթե քննարկվող հարցի լուծման՝ ներկայացված առաջարկներից որևէ մեկը չի ստանում ձայների պահանջվող մեծամասնությունը, ապա դատավորները նորից են քվեարկում, բայց մինչ այդ դատավորները, որոնց արած առաջարկները դրվել են քվեարկության, նշում են, թե արդյոք շարունակում են պնդել իրենց դիրքորոշումը. այդ ժամանակ Դատավորները կարող են հարցի լուծման այլ առաջարկներ ներկայացնել: Եթե այս գործընթացների արդյունքում այդպես էլ որոշում չի կայացվում, Դատավորները քվեարկում են քվեարկության նախորդ փուլում առավել շատ ձայներ հավաքած երկու առաջարկների շուրջ:

Միաժամանակ, նույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ երեքական դատավորներից բաղկացած խմբերում (Panel) քննվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը որոշիչ է³³:

Միջազգային փորձը վկայում է, որ ի տարբերություն ներպետական կարգավորումների՝ քննարկված երկրների օրենսդրական կարգավորումների արդյունքում սահմանվել են այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառության շնորհիվ հնարավոր է խուսափել Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու փոխարեն դիմումը տեխնիկական պատճառներով մերժելու հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է ընդգծել, որ Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով տրված օրենսդրական լուծումը չի երաշխավորում Սահմանադրության 61-րդ հոդվածում ամրագրված՝ յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովումը՝ առաջ բերելով Սահմանադրության այդ հոդվածին համապատասխանության հարց:

³² Հասանելի է <https://www.satv.tiesa.gov.lv/en/2016/02/04/constitutional-court-law/> հղումով:

³³ Հասանելի է

https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud_www/Pravni_uprava/AJ/ConstitutionalCourtAct_1.pdf

հղումով: